

ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.-ի

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ.

Ս. Էջմիածնի Մայր տաճարում 1911 թ. դեկտեմբերի 11—13-ին գումարում համազգային ժողովը ընտրեց ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի առաջին թեկնածու կաթողիկոսական Տեղակալ Տ. Գեորգ արքեպիսկոպոսին, և ընտրութեան արդիւնքը Սինոդը Կովկասեան փոխարքայի ձեռքով առաջարկեց ի ԲՍՐԶՐԱԳՈՅՆ Հաստատութիւն։ Անցնում էին օրերը, այլընդայլոյ լուրերը գալիս էին սաստկացնելու անձկութիւնը և մենք ակնկառոյց սպասում էինք Հաստատութեան աւետարներ լուրին։

Մարտի 18-ին ճաշից յետոյ ժամը 2-ին ստացուեցին Մոսկուայից և Թիֆլիզից շնորհաւորական հեռագրներ, որոնք առաջին աւետարներն եղան, թէ Թագաւոր Կայսրը Բարձրագոյնս բարեհաճել է կաթողիկոսական առաջին թեկնածու Տ. Գեորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցին Հաստատել ամենայն Հայոց Հայրապետ։

Այնուհետեւ աշխարհի ամեն կողմերից ազգային, եկեղեցական, դպրոցական, հասարակական, քաղաքային հաստատութիւններ, պաշտօնական և մասնաւոր անձերն սկսեցին փութացնել շնորհաւորական հեռագրեր սրտագին զգացման և բարեմաղթութիւնների արտայայտութեամբ։ Այդ հեռագրերը գալիս էին մի կողմից հաստատելու կատարում իրողութիւնը, և միւս կողմից ապացուցանելու այն բարոյական սերտ կապի գոյութիւնը, որ կայ Հայ ժողովրդի և Մայր Աթոռի մէջ ի դէմս Հայրապետի և Հայրապետական Աթոռի։

Հաստատութեան լուրը տարածուելով՝ հետզհետէ փութացին անձամբ շնորհաւորութիւններ մատուցանել ընտրեալ և հաստատեալ Հայրապետ Տ. Գեորգ Ե.-ին

Մայր Աթոռի միաբանութիւնը, Սինոդի աստիճանաւորները, Վաղարշապատի հասարակութեան ներկայացու-

ցիւնները, Վաղարշապատի բոլոր պետական հաստատութիւնների պաշտօնեաները համազգեստով, պրաւոսլաւ քահանան, Վաղարշապատի հայ քահանայական դասը, ճեմարանի ուսուցչական խումբը աշակերտների հետ Տեսուչ Տ. Բագրատ վարդապետի առաջնորդութեամբ, Վաղարշապատում և Մայր Աթոռում գտնուող օտարական ազգայինները և ուխտաւորները, շրջակայքի հայ թուրք հասարակութեան ներկայացուցիչներ, Վաղարշապատի եկեղ. ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը և դպրոցական կազմը ի դէմս աւագ ուսուցչի:

Մինչ այս մինչ այն՝ հասան Զատիկի տօները. Յիսուսի ս. Յարութեան կիւրակէին առաւօտեան 9 ժամին. ս. պատարագից առաջ, ազգարարի և երրորդի զանգահարութեամբ Մայր Աթոռոյս միաբանութիւնը խմբուեց Նորին Սրբութեան Տ. Գէորգ Եւ. ի ընակարանի առաջ և առաջին անգամ պաշտօնապէս ամբողջովին ներկայացաւ Նորին Սրբութեան և մատոյց շնորհաւորութիւններ Նորա հաստատութեան և Յիսուսի ս. Յարութեան տօնի առիթով: Միաբանութեան կողմից Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը դիմեց Հայրապետին մօտաւորապէս հետևեալ խօսքերով.

«Վեհափառ Տէր.

«Մայր Աթոռոյս միաբանութեան կողմէն, որ առաջին անգամ պաշտօնապէս կը ներկայանայ Ձերդ Սրբութեան, կը շնորհաւորեմ Ձեր Սրբութեան հաստատութիւնը ի հայրապետական Աթոռ Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, և Յիսուսի Տեառն մերոյ ս. Յարութեան տօնը:

«Աստուծոյ նախախնամութիւնը, որ, համազգային ընտրութեամբ Ձերդ Սրբութիւնը կոչելով յԱթոռ առաջին լուսաւորչացն մերոց սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, բարձաւ հայրապետական գահու վրայէն սգոյ քօղը, որով պարուրուած էր մօտ մի և կէս տարի, տայ Ձեզ կարողութիւն հայ եկեղեցին և եկեղեցական հաստատութիւնները կառավարել իմաստութեամբ, կամքի ու ժգնութեամբ և անձնագոհութեամբ. երկարացնէ Ձեր թանկագին կեանքը յուրախութիւն և ի մխիթարութիւն հայ հոգևորականութեան և ժողովրդի: Յարուցեալն Փրկիչ իւր սուրբ յարութեան շնորհիւ և Ձեր հայրապետական օրհնութեամբ զօրացնէ Մայր Աթոռոյս միաբա-

նութիւնն ու հոգևոր պաշտօնէութիւնը, զօրավիզն լինելու Ձեզ, Ձեր բարի նպատակները յօգուտ ազգի և եկեղեցու ի կատար ածելու համար»:

Նորին Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնեց միաբանութեանը յորդօրելով փառաւոր կացուցանել այն սրբազան պարտականութիւնը, որ ունի հանդէպ ազգի և եկեղեցու: Միաբանութիւնը համբուրելով Սրբազան Հայրապետի աջը, մեկնեց: Այնուհետև ներկայացան Վաղարշապատի քահանայական դասը, պետական հաստատութիւնների պաշտօնեաները, Վաղարշապատի հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները և այլ բազմաթիւ տեղացի և եկւոր անձինք:

Ներկայացան Վեհ. Հայրապետին շնորհաւորելու Նորին Սրբութեան հաստատութիւնն ու Յիսուսի Տեառն մերոյ ս. Յարութիւնը՝

Մարտի 26-ին, Ձատկի մեռելոցի օրը Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս քաղաքի ամեն դասակարգերի ներկայացուցիչների հետ, նոյն ամսի 29-ին՝ Երևանի հայ քահանայական դասը թեմի հոգևորականութեան կողմից:

Ապրիլի 1-ին, շրջակայ գիւղերի քահանաները ժողովորդի հետ, Երևան քաղաքի ս. Կաթողիկէ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը և նոյն քաղաքի ս. Զօրավարի ծխ. հոգաբարձութեան նախագահը:

Ապրիլի 4-ին, առաւօտեան 9<sup>1</sup>/<sub>2</sub> ժամին Սինօգի Ատեանում՝ Նորին Սրբութիւնը ստացաւ Կովկասի Տ. Փոխարքայից իւր Հայրապետ հաստատուելու պաշտօնական թուղթը, որի ընթերցումից յետոյ Սինօգի անդամները առաջինը համբուրելով Հայրապետի Աջը՝ շնորհաւորութիւն մատուցին, այնուհետև Սինօգի միւս պաշտօնեաներն ու ծառայողները ատենադպրի առաջնորդութեամբ մտնելով Ատեան՝ շնորհաւորութիւն մատուցին:

Նորին Սրբութիւնը իւր առաջադրութեամբ № 2380, անմիջապէս յանձնեց Սինօգին հաստատութեան թղթի պատճէնը, որի առիթով կազմուեց հետեւեալ օրագիրը.

Ի 4 ապրիլի 1912 թ. Նորին Կայսերական Մեծութեան

ամենայն Ռուսաց Ինքնակալի հրամանով Ս. Էջմիածնի Սինոդում լսեցին զեկուցումս Ամենայն Հայոց Տ. Տ. Կէսրիկ Սրբազնագոյն Կաթողիկոսը այս թուի № 2380 պատուիրանի հետ ուղարկել է Սինոդիս, կարեւոր և պատշաճ կարգադրութիւններ անելու համար, Կովկասի Տ. Փօխարքայի անցած մարտի 29-ի № 7230 Նորին Սրբութեան անունով ուղղած գրութեան պատճէնը, որում ասուած է, թէ, որպէս երևում է Ներքին Գործերի Նախարարի իւր անունով ստացած գրութիւնից, Թագաւոր Կայսրը այս տարուայ մարտի 13-ին բարեհաճել է Բարձրագոյնս հաստատել Նորին Սրբութեանը ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս արձակելով Սինոդի անդամութեան պաշտօնից, այլ և բարեհաճել է շնորհել Նորան վեղարի ադամանդեայ խաչմիկնոյն ժամանակ Թագաւոր Կայսրը բարեհաճել է յանձնարարել Տ. Փօխարքային հրաւիրել Նորին Սրբութեանը Ս. Պետերբուրգ այս տարուայ մայիսի երկրորդ կիսին, ներկայանալու Նորին Մեծութեան, ապա վերադառնալ ս. Էջմիածին համայն Ռուսաց Գահին հաւատարմութեան երգումն ընդունելու և օծուելու համաձայն Հայաստանեայց եկեղեցու ծիսի, իսկ հաստատութեան Բարձրագոյն Հրովարտակը և վեղարի ադամանդեայ խաչը կ'յանձնուեն Նորին Սրբութեանը Պետերբուրգում։ Ուստի Հրամայեցին, նախ այսօր Մայր Տաճարում կատարել դահալոյական մաղթանք ՆՈՐԻՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ արեւատութեան համար, որ բարեհաճել է հաստատել Նորին Վեհափառութեանն ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս, իսկ շաբաթ օրը, ամսոյս 7-ին կատարել Հայրապետական մաղթանք, երկրորդ՝ հեռագրով պատուիրել Ռուսաստանի բոլոր թեմակալ առաջնորդներին առաջին կիւրակէին կատարել դահալոյական և Հայրապետական մաղթանք և այսուհետեւ Նորին Սրբութեան անունը յիշատակել բոլոր եկեղեցիներում պատարագի ժամանակ և պատշաճ աղօթքներում և այս իմաստով շրջաբերական հրաման ասլ բոլոր ստորագրեալ հաստատութիւններին և պաշտօնատար անձանց, երրորդ՝ Նորին Սրբութեան հաստատութեան մասին և Նորա անունն յի-

շիտակութեան համար հեռագրով տեղեկութիւն տալ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքին, Երուսաղէմի պատրիարքական տեղապահին և Պարսկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի առաջնորդներին, չորրորդ՝ Նորին Սրբութեան Հայրապետական ս. օծումն ընդունելու նախընթաց օրը հրաւիրել Նորան երգումն ընդունել համայն Ռուսաց Կայսերական Գահի հաւատարիմ ծառայութեան համար, երգման թուղթը Նորին Սրբութեան ստորագրութեամբ ուղարկել Կովկասի Տ. Փոխարքային, իսկ պատճէնը պահել Սինօդի գործերում. և հինգերորդ՝ Ս. օծումն ընդունելու օրուանից Նորին Սրբութեանը մատուցանել Սինօդիս օրագրութիւններն ի ստորագրութիւն, որպէս Ատենապետի, իսկ մինչև այդ՝ Ատենիս նախագահող ճանաչելաւագագոյն անդամ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին:

Այս օրագրի համեմատ իսկոյն, այն է ապրիլի 4-ին, ուղարկուեցին հեռագրեր Կ. Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքներին, Պարսկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի առաջնորդներին ըստ այսմ.

«Նորին Մեծութիւն Ռուսիոյ Կայսրը բարեհաճել է հաստատել Սրբազան Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցին ամենայն Հայոց Կաթողիկոս: Սինօդը ծանուցանում է այս մասին Ձերդ Սրբազնութեան և խնդրում է կարգադրութիւն անել Նորին Սրբութեան անունը Ձեր թեմի եկեղեցիներում յիշատակելու համար»:

Ռուսաստանի առաջնորդներին ըստ այսմ.

«Այսօր ստացուեց պաշտօնական հաղորդագրութիւն, թէ Թագաւոր Կայսրը բարեհաճել է Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցին հաստատել ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս: այդ պատճառով Սինօդը առաջադրում է Ձեզ առաջին կիւրակէ մատուցանել ս. պատարագ, յետոյ կատարել գոհացողական մաղթանք Նորին Մեծութեան և Կայսերական Տան արեւշատութեան համար, ըստ պատշաճի յիշատակել Նորին Սրբութեան անունը և կատարել Հայրապետական մաղթանք. շրջաբերականով տեղեկութիւն տալ այս մասին Կոնստանտնուպոլիսի ենթակայ հաստատութիւններին ի պատշաճ կատարումն»:

Մինչ այս գործողութիւնները կը կատարուէին Սինօ-գում, Նորին Սրբութեան հաստատութեան թղթի ստացումն յայտնուեց Մայր Տաճարի լուսարարապետին, և Մայր Տաճարի զանգերի միահամուռ ուրախական և հանդիսաւոր հնչումն աւետեց միաբանութեան և ժողովրդին հայրապետի հաստատութեան պաշտօնագրի ստացումն:

Ժողովուրդը ամեն կողմերից և ձեմարանի աշակերտները ուսուցչական խմբի հետ խմբուեցին Մայր Տաճարի բակը, միաբանութիւնը շուրջառազգեստ բռնեց զանգակատան հրապարակը երկկարգ, Տրդատայ դռնից սկսած:

Նորին Սրբութիւնը շրջապատուած Սինօգի անդամներով և ծառայողներով՝ ժամը 11-ին դուրս եկաւ Սինօգից, Տրդատայ դարվաղի առաջ շուրջառ առաւ և եկեղեցական դասի առաջընթացութեամբ մտաւ Տաճար, թափօրին հետեւեց ժողովուրդը:

Տաճարում, Իջման ս. Սեղանի առաջ կատարուեց Թագաւոր Կայսեր և արքայական տան բարօրութեան համար մաղթանք, որից յետոյ Նորին Սրբութիւնը բարեմաղթութիւններ անելով կայսերական տան համար և օրհնելով ժողովրդին, դուրս եկաւ Տաճարից: Ժողովուրդը ողջունեց Նորին Սրբութեանը «կեցցէ» բացականչութեամբ:

Նորին Սրբութիւնը վերադառնալով իւր նախկին բնակարանը, ուղղեց Կովկասեան Տ. Փոխարքային երկու հեռագիր. մէկով խնդրեց արկանել յոտս Թագաւոր Կայսեր, որ հայ եկեղեցու վեհադոյն հովանաւորն է, հայ հոգևորականութեան, ժողովրդի և իւր ամենահպատակ երախտագիտութեան հաւաստիքը, առ հայ եկեղեցին ցոյց տուած շնորհի համար: Միւս հեռագրով յայտնեց Տ. Փոխարքային երախտագիտութիւն և շնորհակալութիւն Նորին Պայծառափայլութեան բարեացակամութեան համար առ կովկասեան տղգերն, որոց թուում՝ և առ հայերը:

Շնորհաւորութեան համար ներկայացան Նորին Սրբութեան.

Ապրիլի 4-ին Էջմիածնի գաւառի գաւառապետը համազգեստով և այլ պաշտօնական անձեր ու հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներ:

Ապրելի 6-ին, Երևանի քաղաքային ինքնավարութեան կողմից ներկայանալով շնորհաւորութիւն մատուցին քաղաքապետին պ. Յ. Ղ. Մելիք Աղամալեանը, իրաւասուններ Միր-Աբաս Միր-Բարայեւ և Գ. Խ. Տէր Խաչատրեան։

Ապրելի 7-ին, ս. Աւետման տօնի օրը, պատարագի ժամանակ, որ մատուցանում էր Տ. Սուրիաս արքեպիսկոպոսը, կատարուեց Վեհափառ Հայրապետի անուան յիշատակութեան և Հայրապետական խորհրդանիշների յանձնման արարողութիւնը հետեւեալ կարգով։

Ս. պատարագին, «Առաքելոց»-ից յետոյ, նախ քան Հայրապետի անուան յիշատակութիւնը, պատարագիչ արքեպիսկոպոսը ատենաբանութեամբ յայտնեց նոր Հայրապետի հաստատութիւնը. այդ ժամանակ իսկոյն սեաքօղեալ գահը վերցուեց բեմի վերայից. պատարագիչ սրբազանը աւարտելով ատենաբանութիւնը՝ առաջին անգամ յիշատակեց նոր Հայրապետի անունը։

Ս. պատարագի վերջի «Տէր ողորմիա»-յի ժամանակ միաբանութիւնը շուրջառապակստ առաջնորդեց Վեհափառ Հայրապետին իւր բնակարանից Տաճար, ուր Իջման ս. սեղանի առաջ դրուած էր հայրապետական գահը. բայց Հայրապետը կանգնեց գահի մօտ պատրաստուած բազմոցի վերայ։

Ս. պատարագի վերջին, պատարագիչը բեմի վերայից կարգաց Աւետարանը, երգուեց «Թաղաւոր փառաց Աստուած հոգիդ կենդանաբար» շարականը. բեմից իջաւ պատարագիչը, աւանդանից դուրս եկան լուսարարապետը ձեռքին բռնած կաթուղիկոսական խաչ գաւազանը, Հայրապետի աստ-ն կրող գաւազանակիր վարդապետը, երկու վարդապետները հայրապետական դրօշները բռնած, երկու շաթիրները կարմիր զդեպտով արծաթադուլի մականները ձեռքներին, և պատարագիչ սրբազանի առաջընթացութեամբ մօտեցան Վեհափառ Հայրապետին։ Պատարագիչ սրբազանը մատուցց Հայրապետին հայրապետական խաչն ու գաւազանը և համառօտ բանախօսութեամբ հրաւիրեց բազմել հայրապետական գահի վերայ, դրօշակիր

վարդապետները կանգնեցին Հայրապետի հանդէպ Իջմանս. սեղանի աջ և ձախ կողմը, գաւազանակիր վարդապետը տասն ձեռքին բարձր բռնած՝ գահի ետևը, իսկ շաթիրները կանգնեցին նրա աջ և ձախ կողմը:

Երգուեց «Հրաշափառ Աստուած» շարականը. Հայրապետը յառաջացաւ դէպի գահը, կանգնեց գահի առաջ և կատարուեց հայրապետական մաղթանք. Հայրապետը օրհնեց ժողովրդին ու բազմեց գահի վերայ. միաբանութիւնն ու ժամաւորները համբուրելով Նորին Արքութեան Աջը՝ շնորհաւորութիւն մատուցին, որից յետոյ միաբանութիւնը շուրջառապեցաւ զանգահարութեամբ առաջնորդեց Վեհափառ Հայրապետին Վեհարան, երգելով «Որ զշնորհս Աստուածային» շարականը. Վեհափառ Հայրապետը Վեհարանի արտաքին դռան առաջ պահպանիչով արձակեց միաբանութեան ու ժողովրդին և բարձրացաւ Վեհարան:

Գնացքի ժամանակ Տաճարի դռնից մինչև Վեհարան ժողովուրդը «կեցցէ» էր դռնում:

Պատարագիչ սրբազանի արտասանած ասեմարանութիւնը սեւ ֆողի բարձման ժամանակ.

«Մերկեա երժուողէմ դհանդերձ սգոյ և լալականաց քոց  
«և զգեցիր զվայելչութիւն փառացն Աստուծոյ յաւի-  
«տեան: Արկ զքե զկրկնոցն արդարութեան յԱստուծոյ.  
«զիր զխոյր ի զլուխ քո զփառացն Յաւիտենականին»:  
Բարուք Ե. 1—2:

Ո՛վ սգաթախիւծ առաքելական, կաթուղիկէ Մայր մեր սուրբ Էջմիածին, որ երեք տարի յառաջ—որպէս նորահարս զարդերով զուգուած և պաճուճուած, փեսաւէրներդ ի մեծն Բիւզանդիոն ճանապարհելու միջոց այս հեշտալուր ձայնն էիր տարփողում նոցա ականջներին՝ «Երդմնեցուցանեմ զձեզ, փեսաւէրք զուք, յուժղութիւնս և ի գօրութիւնս անդաստանի իմոյ՝ յորժամ դասնիցէք զփեսայն իմ պատմեցէք նմա թէ խանդակաթ եմ ի սէր քո» (Երգ երգոց, Ե. 8), ո՛չ ընդ երկար օրերից յետոյ արտամութեան թախիժով պատուած և ցաւոց արտասուքով բռնուած համօրէն Հայութեան—քո լուսոյ որդիների ականջին սղբացիր, «մի հայիք յիս. զի ես եմ սեւցեալ. զի խեթիւ հայեցաւ յիս արեգակն» (Երգ երգոց

Ա. 5): Վասն զի կարճօրեայ և ցաւագին եղան փեսայիդ կեանքի տարիներն: Աստուածահրաւէր կոչմամբ յափշտակուեց Քեզանից և բանաւոր հօտը շուշանի հովիտներում և ծաղիկների բլուրներում առանց հովուի խմբուած մնաց:

Բայց այժմս լսիր՝ ի՞նչ աստուածազդեցիկ հարան սուրբ Սիօն, որովհետեւ լուսնի ներքեւ անփոփոխ և մշտնջենաւոր բան չկայ՝ Արարչագործողի անփոփոխելի հրամանին համաձայն, այլ վաղանցուկ և փոփոխական են տրտմութիւնն ուրախութեան և ցաւոց վաստակները հեշտագին քաղցրութեան, լսիր—աղաչեմ եմ, մարգարէի աստուածահրաւէր պատգամը, «Մերկեան Երուսաղէմ զհանգերձ սգոյ և լալականաց քոց և զգեցիր զվայելչութիւն փառացն Աստուծոյ յաւիտեան, անկ զքեզ զկրկնոցն արդարութեան յԱստուծոյ, զիր խոյր ի վրէխ քո զփառացն Յաւիտենականին»: Ըստ որում Աստուած որ քեզ վշտացրաւ, հարուածեց ցաւերով Տէր Մատթէոս երկրորդ փեսայիդ իւր մօտ կոչելով, նոյն ամենողորմ Աստուածն զթացաւ և այցելեց քեզ՝ մտցնելով հարանարանիդ առաքաստը Տէր Գէորգ հինգերորդ սրբազան Հայրապետն, ոչ հին Երուսաղէմի բարձրաւանդակներից և ոչ մեծապանծ Բիւզանդիոնի ճոխութիւններից, այլ Տաճարիդ գաւթի խոնարհ յարկերից:

Ուրեմն՝ բաւական համարուին քեզ հեծութիւններ և տրտմութիւն ազդի լրութեան սրբազան պաշտօնեաների՝ որոնք հոգեկան թախծութեամբ են նկատում մեծ Քահանայապետի բացակայութիւնն այս տասն և հինգ ամիսներ: Բաւական համարուին Սիօնի մանկանց յոգնատխուր լալահառաչ ակնարկութիւններ ղէպի հայրապետական սգապատ և սեասքօղ խաչն, գաւազան, թագ և աթոռ՝ որոց զործադիր Հովուապետէն վաղածամ որրացան: Բաւական համարուին և ընդհանուր ազգիս անտերունչ և անայցելու կացութիւնն, որպէս աշխարհի հրապարակում բեռնաբարձ—շահարեր նաւակ իւր պէս պէս արժանիքներով, առանց զեկավարող ձեռնն ապարդիւն կացութիւնն:

Որովհետեւ զերծոյց մեզանից հառաչանաց քուրձն և փոխաբէն զգեցրաւ հոգևոր ուրախութիւն անհասանելի կամք Աստուծոյ, ընտրութիւն ազգին և բարեհաճ հասաստութիւն Օգոստոսիան Կայսեր. վասնորոյ յառաջնք բառնալ սգաւորութեան ծածկոյթը նուիրական Քահանայապետական թագի, խաչի, գաւազանի և աթոռի վերայից: Չայն աւետեանց հնչենք այս խորհրդական աւետարանութեանս տօնին ի լսելիս համօրէն Հայութեան: Ամենախոնարհ երկրպագութեամբ վերառաքենք օրհնութիւններ Յաւիտենականի շնորհաց Աթոռին՝ որ լսելով մեր աղաչանքների ձայնին, պարգեւեց մեզ բարի Հովուապետ՝ մեզ իմաստութեամբ հովուելու և ղէպի օրէնք և արդարութիւն առաջնորդելու: Նորա հետ օրհ-

նենք և երկնաւոր Թագաւորի երկրիս վերայ եղած գթութեան պատկեր—ամենայն Ռուսաց Կայսր Նիկօլայ Ալէքսանդրովիչն՝ որ իբրեւ ապացոյց իւր խնամքների առ ազգս Հայոց, հաճեցաւ հաստատել ազգային ընտրութիւնն: Բարեմաթենք հանգիստ հոգւոյ հանգուցեալ Տէր Մատթէոս Կաթողիկոսի և դասակցութիւն յարքայութեան երկնից ընդ վաստակաւոր Հովուապետաց եկեղեցւոյս: Հուսկ ամենայնի աղաչէնք զԱստուած, որպէս զի երկայնաւէտ կեանք պարգեւէ Տէր Տէր Գէորգ շնորհազարդ Հայրապետին. որպէս զի ընդերկար ժամանակ առատանայ Նորա շնորհաց խնամք և օրհնութիւնն սուրբ եկեղեցւոյ շինութեան և պայծառութեան համար և իւր սիրելի հօտի ուրախութեան, Ամէն»:

### Պատարագիչ սրբազանի նաոր Հայրապետին խաչ գաւազան յանձնելուց յետոյ

#### Վեհափա՛ռ Հայրապետ.

Հայաստանեայց հանուրց եկեղեցեաց և վանօրէից Լուսաւոր-  
չաշէն մայր Սիօն Տաճարումս, առաջի որդւոյն Աստուծոյ Իջման սեղանոյս փոքրաթիւ Յիսուսի ուխտս՝ հոգեորականք և աշխարհականք—որպէս ներկայացուցիչ հանուրց Հայութեան—առանձինն բախտաւորութիւն ունի ուրախութեամբ սրտի տեսնելու Ձեր հոգեկու ձեռքերում ազգային երեքին սրբազան աւանդներ—Հայրապետական խաչ, գաւազան և աթոռ: Սրբազան աւանդներ՝ զորս համարեալ երկու հազար տարի ժամանակներ անձնագոհութեամբ կրած են սուրբ եկեղեցւոյս առաջին Լուսաւորիչք—սրբազան Թագէտս և Բարդուղիմէոս առաքեալք և երկրորդ Լուսաւորիչ սուրբ Գրիգոր պարթեւ հանդերձ իւրեանց արժանընտիր յաջորդներով ցՏէր Մատթէոս երկրորդ Ձեր նախորդ՝ ընդ ամենայն հարիւր քսան և վեց Քահանայապետք:

Այսպէս հաճոյ եղան անհասանելի կամայն Աստուծոյ, ազգային պատգամաւորութեան և Օգոստափառ Կայսեր: Կամք Տեառն օրհնեալ, հաճութիւնք ազգին և Վեհապետին զովեալ: Այդ երեքին նուիրական ազգային սրբութեանց գլուխն է կենսատու խաչն: Սա Յիսուսի ինքնանուէր զոհին քառառաջ սեղանն է՝ յոր բարձրանալով ամէն երկրածին առ ինքն ձգեց: «Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն զիցէ ի վերայ բարեկամաց». խոստացաւ երկնաւոր Վարդապետն իւր աշակերտաց և կատարեց: Կատարեցին և Ձեր առաքելն նախորդք իւրեանց անձանց հանգիստ և դիւրութիւն զոհաբերելով ժողովրդեան՝ որով Հայաստանեայց մարտիրոս եկեղեցին յառաջին իսկ դարուց քրիստոնէութեան հանդերձ Հօտապետօք առաջնորդեալ զօրացաւ ի ձախողակ փորձութիւնս: Գաւազանն սուրբ խաչին հետեոյ իմաստութեան, արդա-

բութեան և ուղղութեան առաջնորդութիւնն է՝ որով անձնագիրը Հովիւներն ի վայրի դալարութիւն և առ ջուրս հանգստեան կը մակա-  
ղէին բանաւոր հօտն և նոցա կենաց ճարակը կը հայթայթէին ի  
զօրութիւն և ի բարգաւաճանս նոցա: Երբեմն ևս չէր մոռցուած  
պատուհասել կամաւոր մոլորութեան և ամայութեան անապա-  
տում ու վարուց անհարթութեան խորաձորերում թափառողներին:  
Սրբազան Պօղոս երբեմն կասէր իւր աշակերտից. «ղիւարդ կամիք  
թէ եկից առ ձեզ. գաւազանաւ բարկութեան, թէ սիրովն Յիսուսի»  
(ա. Կորնթ. Գ. 22), գաւազանն ուղղութիւնն է իշխանաւորի չայրա-  
պետական աթոռն օթաբան է լուսոյ գիտութեան, սիրոյ աշխատու-  
թեան—վաստակոց և հրոյ մարդասիրութեան, կարեկցութեան և  
գթութեան: Դոյն գահաւորակէ՛ն ճառագայթած է խնամատարութիւն  
և յանձանձանք կուրաց, կաղաց, դօսացելոց, հիւանդաց, աղքատաց,  
որրոց, այրեաց և ամենայն կարօտելոց: Այդ տեղէն ճառագայթած  
են կայծակունք ազգանուէր հայրենասիրութեան, ուսումնասիրու-  
թեան, բարգաւաճանք գրականութեան, գիւտ աթութայից լիզուիս  
և ազգի ազգի մակացութեանց: Այդ սուրբ խաչ, գաւազան և աթոռ  
զարդարեցին մեծն Գրիգոր, մեծն Սահակ, մեծն Ներսէս և քաջա-  
գօտի իմաստասէր անուանակիրք:

Վեհաստիճան Քահանայապետ, ամենեքին մեք այդ գեղեցիկ  
յոյսերով և հաւատով խրախուսուած ենք՝ թէ ազգային դոյն նուի-  
րական յատկանիշ աւանդներ Զեր ձեռքին պէտք է ծաղկին, պլու-  
ղաբերեն և բովանդակ Հայութեան ուշադրութիւն առ դոցա վա-  
ղադարենի արժանիք և պայծառութիւն հրապուրեն: Կաղաչե՛նք  
զԱստուած զօրացուցանել զՀոգեւոր Տէրդ ըստ հոգւոյ և մարմնոյ,  
ըստ կամաց և մտաց՝ քաջալերել, խրախուսել և յաւելուլ մեր  
յոյս և հաւատ, Ամէն»:

Նոյն օրը Նորին Արքութիւնը ընդունեց քաղմաթիւ  
պաշտօնական և մասնաւոր անձանց շնորհաւորութիւններ.

Ապրիլի 8-ին, ա. պատարագից յետոյ Նորին Արքութեան  
ներկայացաւ Երեւանի փոխ-նահանգապետը և այնուհետեւ  
ներկայացան Վաղաշապատի բարեգործ. ընկեր. նախագահն  
ու անդամները և շրջակայ գիւղերի քահանաները:

Ապրիլի 9-ին, ներկայացաւ Վաղարշապատի երկու  
սեռի դպրոցների ուսուցչական խումբը:

Ապրիլի 14-ին, շնորհաւորութեան այցելութիւն արեց  
Երեւանի նահանգապետ Գրաֆ Տիգլէնհաուզէն. Թ. Քալան-  
թարեանի ուղեկցութեամբ: